«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

---

12 փետրվարի, 2026 թ. N 5 - Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով «ԹիՎիէս Ընդ Փարթներս Խորհրդատվական Խումբ» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 08308017) 2026 թվականի հունվարի 16-ի դիմումը՝ որպես աուդիտորական կազմակերպություն «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպությանն (այսուհետ՝ Պալատ) անդամակցելու համար,

Նկատի ունենալով «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ Օրենք) 18-րդ հոդվածի 4-րդ մասը,

Հիմք ընդունելով Օրենք 18-րդ հոդվածի կարգավորումները, մասնավորապես՝ նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և նույն հոդվածի 6-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը, Պալատի Կանոնադրության 14.17.20 կետը, 2020 թվական սեպտեմբերի 29–ի N 2–Լ որոշմամբ հաստատված Պալատին անդամակցելու կարգը,

Նկատի ունենալով, որ «ԹիՎիէս Ընդ Փարթներս Խորհրդատվական Խումբ» ՓԲԸ-ն չի համապատասխանում Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներին, դիմորդ կազմակերպության կողմից ներկայացվել են Օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջները չբավարարող փաստաթղթեր, մասնավորապես՝ «ԹիՎիէս Ընդ Փարթներս Խորհրդատվական

Խումբ» ՓԲԸ-ի կողմից Պալատ ներկայացված փաստաթղթերի համաձայն ընկերությունը չի բավարարում այլ գործատուի մոտ չաշխատող առնվազն երկու աուդիտորներ ունենալու պահանջը,

Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Մերժել «ԹիՎիէս Ընդ Փարթներս Խորհրդատվական Խումբ» ՓԲԸ-ի 2026 թվականի հունվարի 16-ին ներկայացված դիմումը՝ Պալատին որպես աուդիտորական կազմակերպություն անդամակցելու վերաբերյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակման պահից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ՄԱՆՎԵԼ ՂԱԶԱՐՅԱՆ**